Սնունդ և քաղաքականությունը

Անվճար հավելված

Հունիս 2011

Փաստաչափ

ՕՔՍՖԱՄ. «Մինչև 2030 թ. սննդամթերքի գներն ավելի քան կրկնակի կաճեն»

Այսօր սովի է մատնված Երկրագնդի յուրաքանչյուր յոթերորդ բնակիչ, իսկ 20 տարի անց քաղցած կլինի յուրաքանչյուր հինգերորդը. սրանք տվյալներ են ՕՔՍՖԱՄ միջազգային բրիտանական բարեգործական կազմակերպության Growing a Better Future («Հանուն ավելի լավ ապագայի») զեկույցից:

Կազմակերպության կանխատեսմամբ՝ մինչև 2030 թ. հիմնական սննդամթերքի գները կաճեն 120-180 տոկոսով, աշխարհի բնակչությունը մինչև 2050 թ. կավելանա մեկ երրորդով՝ հասնելով ավելի քան 9 միլիարդի, իսկ սննդամթերքի պահանջն ավելի շատ կաճի՝ 70 տոկոսով: Կազմակերպության գնահատականներով՝ «վտանգի մեջ են միլիոնավոր մարդկանց կյանքը», այն դեպքում, երբ զարգացող երկրներում «աղքատները սննդի վրա են ծախսում վաստակած գումարի 50-80%-ը»:

Զեկույցում որպես սննդամթերքի գնաճի վրա ազդող հիմնական գործոն նշվում են կտրուկ կլիմայական փոփոխությունները: Ի թիվս այլ գործոնների՝ կազմակերպությունը նշում է նավթի գների բարձրացումը, կենսավառելիքի աճող պահանջարկը, ֆինանսական մեքենայությունները և այլն:

ՀԲ. «Անցյալ տարվա ընթացքում պարենի համաշխարհային գներն աճել են 36%-ով»

- նշվում է 2011-ի ապրիլին Համաշխարհային բանկի ներկայացրած զեկույցում: Մասնավորապես՝ եգիպտացորենի գներն աճել են 74, ցորենինը՝ 69%-ով, և միայն բրնձի գներն են անփոփոխ մնացել: ՀԲ-ի փորձագետների գնահատականներով՝ պարենի և էներգակիրների գների բարձրացումը ստեղծում է խոցելիության լրացուցիչ աղբյուր «զուտ» ներմուծող երկրների, հատկապես Հայաստանի, Վրաստանի, Ղրղզստանի, Մոլդովայի և Տաջիկստանի համար, որտեղ կարող է էապես բարձրանալ աղքատության մակարդակը:

FAO. «Հացահատիկային մշակաբույսերի գները աննախադեպ բարձր են մնում»

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) համաձայն դրանք մնում են անցյալ տարվա գների մակարդակը 69%-ով գերազանցող նիշի վրա: Մեծ է հավանականությունը, նշում են FAO-ի փորձագետները, որ այս իրավիճակը կպահպանվի նաև 2012-ին: «Նրանց համար, ովքեր ուտելիքի վրա են ծախսում իրենց եկամտի 80%-ը, այս հեռանկարը նշանակում է մեկ բան. անորոշ ժամանակահատվածի ընթացքում այս մարդիկ ստիպված կլինեն սնվել ոչ թե «կուշտ», այլ «ինչպես պատահի»,- նշվում է FAO-ի հայտարարությունում:

Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող աղետների տնտեսական վնասները կազմում են տարեկան շուրջ 100 մլրդ դոլար:

էջ 3

Լուսանկարը՝ Էբի Թրայլեր Սմիթի

Ինչ խոսք, գուցե և գեղեցիկ են հայկական լեռներում այս լուսապայծառ առավոտը և ճերմակության միջից շողացող ծիրանենու վարդագույն ծաղիկը: Սակայն գյուղացիների համար դա իսկական աղետ է: «Մեր նորածին «բալիկը» ցրտահարվում է, սարսափելի է, մենք նորից կորցնում ենք ամբողջ բերքը»,- ասում է Անժելա Բաբայանը, որը գյուղի մյուս բնակիչների պես, հուսահատված, ծիրանենու ճյուղերն է թափ տալիս՝ փորձելով նուրբ ծաղիկներից թոթափել ծյան շերտը: Սովորաբար վերջին ցրտահարություններն այստեղ լինում են մարտի վերջին: Ապրիլին պետք է տաք լիներ, բայց կրկնվում է անցյալ տարվա պատկերը: Նույնիսկ խնձորենու բողբոջները, որոնք դեռ նոր-նոր են ձևավորվել, արդեն եզրերին ցրտահարության նշաններ են ցույց տալիս…

Անժելա և Արթուր Բաբայաններն ապրում են Վայոց ձորի Եղեգիս գյուղում: Երեք զավակ ունեն՝ 11, 16 և 18 տարեկան: Առանց այդ էլ աղքատության շեմին գտնվող այս ընտանիքի համար անբարենպաստ եղանակային պայմանները լուրջ խնդիրներ են ենթադրում… Բաբայանների մասին պատմությունը բրիտանացի լրագրող Ալեքս Ռենթոնի այս տարվա ապրիլին Հայաստանում հավաքած նյութերից մեկն է միայն…

Շարունակությունը՝ էջ 3-4

Աճեցնենք ավելի շատ, կերակրենք մոլորակը

Աշխարհին առանց սովի

GROW-ն մեր և միլիոնավոր այլ մարդկանց համաշխարհային արշավն է «Աճեցնենք ավելի շատ, կերակրենք մոլորակը», ունենանք «Աշխարհին առանց սովի» կարգախոսների ներքո:

ՕՔՍՖԱՄ-ը մեկնարկում է համաշխարհային GROW արշավը՝ «Աճեցնենք ավելի շատ, կերակրենք մոլորակը», որի նպատակն է խթանել դրական փոփոխություններ պարենամթերքի և այլ ռեսուրսների արտադրության, սպառման, բաշխման և կառավարման գործընթացներում:

Այսօր աշխարհում մեկ միլիարդ մարդ ամեն օր քաղցած է պառկում քնելու, թեև աշխարհը կարող է կերակրել բոլորին: Ճգնաժամերի նոր փուլը, որն առաջացել է պարենամթերքի ապահովության խաթարված համակարգի և կլիմայական փոփոխությունների հետևանքով, ավելի ու ավելի է բարդացնում «աշխարհը կերակրելու» խնդիրը:

Սա շրջադարձային կետ է: Արտոնյալ խմբերի կողմից ձևավորված համակարգը հիասթափեցնում է միլիոնավոր մարդկանց: Վտանգված է մեր հասարակությունների բնականոն և համաչափ զարգացումը, քանզի այսօր զարգացման հիմքում ընկած են հսկայական անհավասարությունը, ռեսուրսների անարդար բաշխումը, բնական պաշարների՝ բերրի հողի և խմելու ջրի անարդյունավետ օգտագործումը:

GROW արշավը նպատակ ունի բարեփոխել կառավարությունների այն ծախողված քաղաքականությունը, որոնք խրախուսում են հասարակության մեջ արմատացած անհավասարությունն ու ռեսուրսների անարդար բաշխումը, նպաստում են պարենամթերքի գների կտրուկ աճին, ինչպես նաև մտադիր է բացահայտել մոտ 300-500 հզոր ընկերությունների, որոնք շահույթ են ստանում ստեղծված իրավիճակից և շարունակում են առաջ մղել իրենց շահերը՝ գերիշխող դիրքը պահպանելու համար:

Արդեն 70 տարի տարի է՝ ինչ ՕՔՍՖԱՄ-ն արձագանքում է սննդամթերքի ճգնաժամերին: Այժմ այն կոչ է անում կառավարություններին անցում կատարել դեպի պարենամթերքի առավել արդար և կայուն համակարգ՝ ներդրումներ կատարելով գյուղատնտեսության մեջ, արդյունավետ օգտագործելով երկրագնդի բնական պաշարները, դրսևորելով հավասար վերաբերմունք կանանց նկատմամբ, ովքեր արտադրում են աշխարհի սննդամթերքի մեծ մասը: ՕՔՍՖԱՄ-ը կոչ է անում նաև մասնավոր հատվածին անցում կատարել այն գործարար մոդելին, որտեղ շահույթը ձեռք չի բերվում աղքատ արտադրողների, սպառողների և շրջակա միջավայրի հաշվին:

Հաշվի առնելով համաշխարհային և մեր երկրին սպառնացող պարենային ճգնաժամը՝ ՕՔՍՖԱՄ ՄԲ հայաստանյան գրասենյակը և «Քաղաքացիական հասարակության համագործակցություն» ցանցը՝ ի դեմս 27 հասարակական կազմակերպությունների, կոչ են անում ՀՀ իշխանություններին՝

- զսպել ներքին պարենամթերքի շուկայում ահագնացող գնաճը,
- ներդրումներ կատարել փոքր ֆերմերային տնտեսություններում և գյուղատնտեսական կոոպերատիվներում,
- վերահսկել ներմուծվող պարենային ապրանքների գները, խթանել գյուղմթերքների տեղական արտադրությունը,
- խթանել ներդրումները՝ մեղմելու համար կլիմայի բացասական ազդեցությունը գյուղատնտեսության վրա:

Մենք հավատում ենք, որ փոփոխությունները հնարավոր են և սկսվում են մեզնից յուրաքանչյուրից:

**Աշխարհին առանց սովի:
Աճեցնենք ավելի շատ,
կերակրենք մեր երկիրը:**

Բարձր ռիսկի գոտի

Աղքատության դեմքը

Հանրապետությունում աղքատության մակարդակը՝ 34,1%
Մեկ երեխա ունեցող ընտանիքների աղքատության մակարդակը՝ 37,9%
Երկու երեխա ունեցող ընտանիքների՝ 44,1%
Երեք երեխա ունեցող ընտանիքների՝ 51,8%
Երեխաներ ունեցող՝ կանանց գլխավորած ընտանիքների՝ 48,5%
Հաշմանդամություն ունեցող երեխաներով ընտանիքների՝ 70%

Լուսանկարը՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի

Հայաստանի գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակը կազմում է 34,9 տոկոս, ընդ որում՝ աղքատության մակարդակի բարձրացումը գյուղական վայրերում ավելի արագ է ընթանում, քան քաղաքային համայնքներում: Աղքատության բարձր մակարդակով աչքի են ընկնում Շիրակի մարզը՝ այստեղ աղքատությունը կազմում է 47,2%, դրան հետևում են Կոտայքը՝ 43%, Լոռին՝ 41,7%, Գեղարքունիքը՝ 40,4%, Տավուշի մարզը՝ 34,9%:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը»

Ի՞նչ անել

Որքա՞ն կարժենա աղքատության հաղթահարումը

Աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 93,5 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 3% կազմող գումար, իսկ ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի մոտ 2,5 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 0,1 % -ը: Այդ ամենը՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների՝ ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին: Սակայն միջազգային փորձը վկայում է, որ սոցիալական աջակցության անթերի հասցեականություն ապահովելը խիստ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցներն իրականում շատ ավելի են:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

«Զգսպվող գնաճը լրջագույն խնդիր է, որն իր հետ առաջ է քաշում ամենահիմնական մարտահրավերը՝ աղքատությունը: Ազգային ժողովի ամբիոնից առիթ ունեցել եմ ներկայացնելու, որ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի վերջերս անցկացրած ուսումնասիրությունները վկայում են. Հայաստանում տիրում է համատարած աղքատություն: Ավելի քան խոսում են նույնիսկ պաշտոնական տվյալները. այսօր հանրապետությունում 1մլն. 100 հազար մարդ աղքատ է:

Այդ պատճառով ես այն կարծիքին եմ, որ կառավարությունը պետք է ինդեքսավորում կատարի, հատկապես անապահով խավի հետ կապված, որ, ասենք, ինֆլյացիայի դեպքում, որն այսօր որոշ կանխատեսումներով սպառնում է ողջ աշխարհին, այդ խմբի քաղաքացիները պետության կողմից պաշտպանված լինեն:

Իսկ բացի այս, անկախ արտաքին ազդակներից, որոնք, բնական է, չեն կարող իրենց ազդեցությունը չունենալ Հայաստանի նման երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, ես համոզված եմ, որ անհրաժեշտ է այլ գործողություններ ևս և դրանց թվում, թերևս, ամենակարևորը մենաշնորհների դեմ իրական պայքարն է»:

ՀՀ Աժ պատգամավոր Վիկտոր Դալլաքյան

Գնաճ

Սպառողական գներն աճել են

ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալներով՝ անցյալ տարվա մայիսի համեմատությամբ այս տարվա մայիսին Հայաստանում սպառողական գներն աճել են 9%-ով, ընդ որում՝ պարենային ապրանքների գները՝ 16,2%, ոչ պարենային ապրանքներինը՝ 2,4%-ով, բնակչությանը մատուցվող տարբեր ծառայությունների գները՝ 2,5%-ով:

Այս ժամանակահատվածում պարենային ապրանքախմբերից առավել գնաճ է արձանագրել հացամթերքը՝ 16,9%, կաթնամթերք՝ 22,4%, բանջարեղենը, կարտոֆիլը՝ 35,4%, միրգը՝ 19,9%, ձուն՝ 20,5%, մսամթերքը՝ 9%: Գնանկում է արձանագրել շաքարավազը՝ 0,4%:

Ըստ «Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ իրականացրած գնային մոնիթորինգի՝ մեկ տարվա ընթացքում նշանակալի չափով թանկացել են պանիրը՝ 52%-ով, կարագը (28%) և արևածաղի ձեթը (38%): Սուրճը թանկացել է 14%-ով, բրինձն ու մակարոնեղենը՝ համապատասխանաբար՝ 5%-ով և 4%-ով:

Առաքելություն

«Ստեղծել նոր, ավելի արդար եւ արդյունավետ պարենային համակարգ»

Հայաստանում GROW գլոբալ արշավի նպատակների մասին է մեր զրույցը «ՕՔՍՖԱՄ-ՄԲ»-Հայաստան կազմակերպության տնօրեն Մարգարիտա Հակոբյանի հետ

- Համաշխարհային մասշտաբով ծավալված ՕՔՍՖԱՄ-ի GROW արշավը («Աճեցնենք ավելի շատ, կերակրենք մոլորակը») կոչված է մարդկության ուշադրությունը բևեռել մի շարք գործոնների, հատկապես կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած հիմնական սննդամթերքի սակավության և քաղցած մարդկանց թվաքանակի ավելացման խնդրին: Արշավի նպատակն է գործնական դրական փոփոխություններ կատարել սննդամթերքի և այլ ռեսուրսների արտադրության, սպառման, բաշխման և կառավարման գործընթացում:

Հաշվի առնելով սննդամթերքի գների աճը, իսկ ՕՔՍՖԱՄ-ի կանխատեսումներով՝ մինչև 2030 թ. դրանք գրեթե կրկնակի կաճեն, այս խնդիրն առավել քան հրատապ է դառնում նաև Հայաստանի համար: Գյուղատնտեսությունն այն ոլորտն է, որն ապահովում է բնակչության հիմնական պարենամթերքը, մինչդեռ Հայաստանում մի քանի տարի շարունակ և՛ կարկուտը, և՛ անձրևները, կլիմայի ոչ սովորական փոփոխությունները լուրջ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Արդեն չորրորդ տարին է, որ բերքի կորուստ ենք ունենում: Կարծում եմ՝ մեր կառավարությունը և հասարակ մարդիկ հետևություններ անում են:

- Այս պարագայում ի՞նչ է առաջարկում ՕՔՍՖԱՄ-ը:

- Եթե կլիմայի փոփոխությունը վնաս է հասցնում գյուղատնտեսությանը, ապա պետք է կարողանալ ավելի դիմացկուն, ոչ ավանդական մշակաբույսերի արտադրության միջոցներ ձեռնարկել: ՕՔՍՖԱՄ-ի աջակցությամբ արդեն ստեղծվել են տասը կոոպերատիվներ Վայոց ձորի և Տավուշի մարզերում: Հարկավոր է խրախուսել գյուղացուն՝ փոքր ֆերմերին, որ նա շատ արտադրի՝ ապահովելով և՛ համապատասխան սննդամթերք սպառողների համար, և՛ եկամուտ իր համար: Ստեղծել ենք նաև սառնարանային տնտեսություններ, որտեղ մթերքները կպահվեն մինչ իրացումը կամ վերամշակող գործարանների հետ կապի հաստատումը: Ներմուծել ենք ոչ ավանդական մշակաբույսերի արտադրություն՝ բրյուսելյան կաղամբ, բրոկոլի, կեռասային լոլիկ… դա արվում է Դարակերտի գիտահետազոտական կենտրոնի մասնագետների ներգրավմամբ: Մեր նպատակն է՝ հնարավորություն տալ մարդկանց ունենալ այլընտրանքային եկամտի աղբյուր, օգնել փոքր ֆերմերներին ստեղծել արդյունավետ գործող մոդելային տարբերակներ, մոտեցումներ և առաջարկել դրանք կառավարությանը:

Սա է ամբողջ խնդիրը, որ կազմակերպությունն ուղղում է երկրի կառավարությանը, իսկ գլոբալ մակարդակում՝ որոշումներ կայացնող «Մեծ ութնյակին», որի խնդիրն է՝ հաշվի առնելով սննդամթերքի գնաճի և քաղցած մարդկանց թվաքանակի ավելացման վտանգը, ավելի արդյունավետ աշխատել զարգացող երկրներին օգնելու ուղղությամբ: Կարևոր է նաև հասկանալ՝ ո՞ր գներն են արհեստականորեն բարձրացված և որո՞նք՝ հիմնավորված, այսինքն՝ դրանց օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Օբյեկտիվ են, եթե գլոբալ առումով տեղի են ունենում կլիմայական փոփոխություններ, որոնք անդրադառնում են գների վրա, սուբյեկտիվ են կամայական բարձրացված գները: Շուտով կներկայացնենք հանրությանը նաև Հայաստանում կատարված մեր ուսումնասիրությունը, որը կբացահայտի գնաճի ազդեցությունը երկրում մարդկանց կենսապահովման և ահագնացող աղքատության մակարդակի վրա: Ուսումնասիրել ենք, թե որքանո՞վ են հիմնավորված ներմուծված պարենային ապրանքների գները, ինչպե՞ս է տեղի ունենում գնագոյացումը: Եվ եթե Հայաստան ներմուծված ապրանքը վաճառվում է բարձր գնով և ազդում տեղական արտադրության վրա, ապա հարց է ծագում՝ ինչո՞ւ ներմուծել ապրանքներ, որոնք կարող ենք տեղում արտադրել: Գուցե հարկավոր է խթանե՞լ տեղական արտադրությունն ու վերահսկել գնաճի մեխանիզմը:

- Ի՞նչ հաջողություններ եք արձանագրել Հայաստանում:

- Արդեն 16 տարի է՝ ինչ աշխատում ենք Հայաստանի 6 մարզերի ավելի քան 165 գյուղական հեռավոր և սահմանամերձ համայնքներում: Տարբեր ծրագրեր ենք իրականացնում՝ համագործակցելով տեղական հասարակական կազմակերպությունների, ՏԻՄ-երի և մարզային իշխանությունների հետ: Առաջնորդվում ենք «Արդյունավետ աշխատանք՝ քիչ ռեսուրսներով» կարգախոսով: Այնուամենայնիվ, ռեսուրսներն անհրաժեշտ են, և մենք փորձում ենք ներգրավել նաև այլ դոնոր-կազմակերպությունների, որոնք կարող են ներդրումներ կատարել: Օրինակ՝ ՄԱԿ-ի հետ մենք ունեցել ենք երկարաժամկետ համագործակցություն, և քանի որ մեր առաքելությունները համընկնում են, վերջերս ստորագրեցինք փոխգործակցության հուշագիր, որի նպատակն է համատեղել մեր ջանքերն ու միջոցները՝ ուղղված Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքի բնակիչների կենսապայմանների բարելավմանն ու աղքատության նվազեցմանը: Այնտեղ արդեն ունենք սառնարանային համալիր, որն անցյալ տարի տվեց իր արդյունքը. արտադրողը, բացառելով միջնորդին, 30-40%-ով ավելի եկամուտ ստացավ: Այժմ, ՄԱԿ-ի հետ համատեղ, 17 ֆերմերներին, ովքեր կոոպերատիվի անդամ են, մենք տրամադրում ենք ջերմոցներ: Դա այնքան մեծ ներդրում չէ, բայց մենք ապահովում ենք ամեն ինչ՝ և՛ ուսուցումը, և՛ մշակաբույսերի տրամադրումը, և՛ կաթիլային ոռոգման համակարգը, նաև չորանոցների տեղադրումը՝ օրգանական չիր ստանալու համար:

- Որքա՞ն ժամանակ եք պատրաստվում լինել հայ ֆերմերի կողքին:

- Մեր ծրագիրը մոտ 5 տարվա ռազմավարություն ունի, սկսել ենք անցյալ տարի և առաջիկա 4 տարիների ընթացքում նպատակ ունենք մոտ 4000 ֆերմերների օգնել ավելացնելու իրենց եկամուտը:

- Վերադառնալով GROW-ի գլոբալ նպատակին՝ ի՞նչ եք կարծում՝ հնարավոր է արդյոք «Աշխարհն առանց սովի»:

- Ռեսուրսներ աշխարհում կան, պարզապես պետք է դրանք հավասարաչափ բաշխվեն: Եթե աշխարհում բոլորը կարողանան լծվել պարենային առկա համակարգի բարելավման գործին, կարծում եմ՝ արդյունքում կունենանք կայուն ապագայի հնարավորություն երկրագնդի բոլոր բնակիչների համար: Միայն թե արդեն այսօր է հարկավոր է քայլեր ձեռնարկել աղքատությունը մեղմելու, նվազեցնելու, նոր, արդար պարենային համակարգ ստեղծելու համար:

Կարծում եմ՝ բոլոր մարդիկ, ովքեր բարեկեցիկ են ապրում, հասկանում են, որ իրենց բարեկեցության համար անհրաժեշտ է, որ կողքին ապրող սովածը կուշտ լինի: Հակառակ դեպքում, եթե դու հիմա նստած վայելում ես քո բարեկեցիկ կյանքը, իսկ քեզ համար անհրաժեշտ մթերքն այնտեղ՝ գյուղում, չի արտադրվում, վաղը դա կանդրադառնա նաև քեզ վրա…

Հարցազրույցը վարեց Սուսաննա Հովհաննիսյանը

Օգնության ձեռքը

«Եթե մենք երես ենք թեքում ամենաաղքատներից, թողնում ենք նրանց մեռնել, մենք կործանում ենք մեր սեփական հոգին: Դա նաև վտանգավոր է, քանի որ նույնն է՝ եթե, ասենք, դուք մարդկանց լքեիք համաճարակի ժամանակ...

Աղքատության ծավալները կրկնակի կրճատելու համար առավել զարգացած երկրները պետք է ընդամենը երկու անգամ, իրենց ՀՆԱ-ի մինչև 0,5%-ի չափով ավելացնեն աղքատ երկրներին տրամադրվող օգնությունը: Մենք խոսում ենք հարուստ երկրների կողմից իրենց եկամտի յուրաքանչյուր 100 դոլարից 50 սենթը աշխարհի աղքատ մարդկանց օգնելու համար հատկացնելու մասին՝ զարգացման սանդուղքի վրա նրանց հեռման կետ տալու համար»:

Ջեֆրի Սաքս, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ՀԶՆ-ի գծով ծրագրի հատուկ խորհրդական, «Աղքատության վերջը» գրքի հեղինակ

Իրական պատմություններ

Իրինա Ավանեսյան.
«Շատ բաներ կան, որ կուզեինք երեխեքի համար առնել, բայց օր օրի ամեն ինչ թանկանում է»...

Լուսանկարը՝ Էբի Թրայլեր Սմիթի

- Ինչ-որ մարդիկ ներխուժեցին մեր տուն՝ Սումգայիթ և ծեծեցին իմ ամուսնուն, երեք օր հետո նա մեռավ: Ամուսինս շինարար էր: Երբ ջարդերը սկսվեցին, ես վերցրի իմ երեխեքին և փախա,- պատմում է Իրինա Ավանեսյանը: Նա Հերմոն գյուղի այն բնակիչներից է, ով 1988-ին ստիպված լքել է իր բնակավայրը՝ տունը փոխանակելով հայաստանաբնակ ադրբեջանցու հետ:

Իր ուսերին կրելով բազմաթիվ դժվարություններ՝ Իրինան մեծացրել է երկու որդիներին՝ Արայիկին և Արազին: Այսօր տղաներից մեկը՝ Արայիկը, ամուսնացել է, ունի երկու զավակ, սակայն սոցիալական պայմանները ստիպեցին նրան արտագնա աշխատանքի մեկնել:

- Տղաս մեկ ամիս առաջ մեկնել է Մոսկվա: Լավ է, որ գնաց, գյուղում աշխատանք չկա: Իսկ էնտեղից ամեն ամիս կարողանում է մեզ գոնե մի քիչ փող ուղարկել: Բայց նրա կարիքն էստեղ էլ է զգացվում. դաշտերում շատ գործ կա...

Մյուս տղան՝ Արազը, մեկ-մեկ օրական 2000 դրամով հոտ է արածեցնում: Իրինայենց ընտանիքը փոքր հողակտոր ունի և ՕՔՍՖԱՄ-ի ծրագրով հատկացված մեկ կով: Այն բավական կաթ է տալիս, և նրանք կարողանում են պանիր սարքել:

- Մեր կարտոլ ու լոբի ենք աճեցնում: Ունենք նաև ընկույզի ծառ, որը լավ բերք է տալիս և այդպիսով կարողանում ենք գումար վաստակել: Հաճախ ընկույզը փոխանակում ենք ուրիշ մթերքի հետ... ՕՔՍՖԱՄ-ը պատրաստվում է օգնել մեզ՝ կոոպերատիվ ստեղծել: Մենք հնարավորություն կունենանք ավելի շատ եկամուտ ստանալ՝ մեր վաճառած ապրանքի դիմաց:

Սակայն տիկին Իրինան այս տարվա համար մտահոգ է, քանի որ անցյալ տարի կարտոֆիլի բերքը լավը չէր, և ընտանիքը նորը ցանելու սերմացու չունի:

- Էսօր մենակ մակարոն ենք ուտում՝ մեր սարքած պանրով և մածունով: Միս ուտում ենք երևի թե ամիսը երկու անգամ: Վերջին անգամ տղայիս Մոսկվա ճանապարհելու ժամանակ էր: Շատ բաներ կան, որ կուզեինք երեխեքի համար առնել... Բայց ամեն ինչ թանկ է և օր օրի ավելի է թանկանում. ձեթը 700 դրամից 1000 է դառել, մի պարկ ալյուրը՝ 5000-ից 7000:

Ասյա Թեմանյան.
«Անցյալ տարի ցրտահարության պատճառով մենք կորցրինք խնձորի ողջ բերքը»...

Ղարաբաղյան հակամարտության հետևանքով Թեմանյանների ընտանիքը տեղափոխվել է Վայոց ձորի Արտավան գյուղ: Լեռան լանջին ծվարած գյուղում եղանակը ցրտաշունչ է. ապրիլի կեսին դեռ հաստ շերտով պահպանվում է ձյունը: Ջերմաստիճանը ձմռանը հասնում է 25 աստիճան ցրտի:

Թեմանյանները հինգ երեխա ունեն՝ 14-ից 34 տարեկան: Նրանցից երկուսը մտավոր խնդիրներ ունեն: Հաշմանդամության այս տեսակը շատ տարածված է Հայաստանի լեռնային շրջանում, ինչը, բժիշկների հավաստմամբ, կարող է կապ ունենալ վաղ տարիքում թերսնման հետ:

Լուսանկարը՝ Էբի Թրայլեր Սմիթի

Ասյա և Ջոհրաբ Թեմանյաններին հանդիպեցինք իրենց այգում: Ամուսինները նայում էին՝ արդյոք սառնամանիքները չե՞ն վնասել խնձորենու բողբոջները, որը նրանց եկամտի հիմնական աղբյուրն է:

«Անցյալ տարի ցրտահարության պատճառով կորցրինք խնձորի ողջ բերքը: Բայց ՕՔՍՖԱՄ-ի ծրագրով նվիրած կովի և երկու ոչխարի շնորհիվ պանիր, մածուն ունեինք, որն էլ փոխանակեցինք կարտոլի հետ: ՕՔՍՖԱՄ-ի՝ կոոպերատիվներ ստեղծելու գաղափարը շատ լավն է: Եթե լուծվեն վառելիքի ծախսերը, մենք կրկնակի շատ կվաստակենք՝ խնձորը Երևանում ծախելով»,- ասում է Ասյան:

Ամուսինը՝ Ջոհրաբն էլ իր հերթին ավելացնում է, որ ՕՔՍՖԱՄ-ի շնորհիվ իրենց կյանքն ավելի լավ է, մինչ այդ հազվադեպ էին կաթ-մածուն ուտում: Ճիշտ է, հատկացված ոչխարները ստիպված էին վերջերս վաճառել Ասյայի կյանքը փրկելու և վիրահատելու համար, բայց կովը պահեցին և արդեն երկու հորթ ունեն: Իսկ 25 հազար դրամ սոցիալական նպաստով նույնիսկ բավարար ալյուր չեն կարողանում գնել և պարտք են անում:

Նինա Եգանյան.
«Այսօր մեր կոոպերատիվում ընդգրկված է 32 ընտանիք»...

Նինա Եգանյանը դասավանդում է Տավուշի մարզի Ակնաղբյուր գյուղի դպրոցում: Ամուսինը՝ Գարիկ Սարդարյանը, անտառապահ է: Ունեն երկու տղա և մեկ դուստր: Նինան ֆերմերային կոոպերատիվի անդամ է, որը ստեղծվել է ՕՔՍՖԱՄ-ի օգնությամբ: Նա ունի 30 պտղատու ծառեր, որոնք կազմակերպության նվիրատվությունն են Նինայի ընտանիքին: Այժմ ՕՔՍՖԱՄ-ը կոոպերատիվների հետ հիմնում է սառնարային տնտեսություններ, որտեղ կարող է պահվել բերքը՝ հետագայում ավելի շահավետ գնով վաճառելու համար:

«Առաջ դժվարանում էինք ծախել մեր բերքը՝ տարեկան ընդամենը 40-50 հազար դրամ վաստակելով: Իսկ անցյալ տարի բերքը վաճառեցինք 230-350 դրամով, մինչ այդ այն պահվում էր պահեստում: Սովորաբար մենք ստանում էինք 200 դրամ կիլոյի համար, իսկ հիմա՝ ավելի շատ»,- գոհունակությամբ պատմում է Նինան:

Նինան ՕՔՍՖԱՄ-ի օգնությամբ սկսեց մարքեթինգ սովորել.

- Սովորեցի՝ ինչպես հիմնել սեփական տնտեսություն, ինչպես ճիշտ խնամել ծառերը, ինչ անել, երբ նրանք հիվանդանում են... Այսօր մեր կոոպերատիվում ընդգրկված է 32 ընտանիք, որի բոլոր անդամներն էլ ունեն հավասար իրավունքներ, վարչություն ենք ընտրում, ամսական 500 դրամ անդամավճար մուծում: Ի դեպ, շահավետ գների մասին կոոպերատիվի անդամներին տեղեկացնում են անմիջապես՝ sms-ներով:

Ալեքս Ռենթոնի զրույցներից

Ձայն բազմաց

Ինչպե՞ս է ազդել գնաճը ձեր ընտանիքի բյուջեի վրա

Մեր այս հարցին Երևանի բնակիչներից շատերը նշեցին, որ վերջերս իրենց ընտանեկան բյուջեն չի բավականացնում նորմալ սնվելու համար և հատկապես զգալի չափով՝ այս տարվա սկզբից:

«Ես էլ, ամուսինս էլ նույն աշխատանքն ենք անում ինչ-որ առաջ, բայց հիմա շատ բաներից ստիպված ենք զրկել մե՛զ էլ, երեխաների՛ս էլ,- ասում է 37-ամյա **Վարսինե Գրիգորյանը:** - Ես ամեն շաբաթ 25.000 դրամ հատկացնում էի սննդին, բայց, ազնիվ խոսք, չի հերիքում: Առաջ շաբաթը ոնց էլ լինի՝ մսով ճաշ էի սարքում, հիմա միայն կիրակի օրերին ենք միս ուտում: Մրգի սեզոն է, բայց այնքան թանկ է, որ չեմ կարողանում երեխաներիս համար առնել, բայց աճող օրգանիզմ են, նրանց վիտամիններ են պետք»:

51-ամյա **Անահիտ Սարգսյանն** էլ մոտ երկու ամիս է՝ չի կարողանում պատրաստել իր և ամուսնու սիրած ճաշը՝ բորշչը: «Բորշչի համար կաղամբ է պետք, թանկացել է, կարտոֆիլը թանկ է, գազարը, սոխը, կանաչին թանկ են, ես ինչո՞վ առնեմ: Իմ աշխատավարձը 120 հազար է, թվում է՝ նորմալ փող է, բայց երբ գնում ես շուկա, հասկանում ես, որ աղքատի աշխատավարձ ես ստանում մեր գներով»,- ասում է երկու երեխաների մայրը: Անահիտը որոշել է կրճատել իր մաշկի խնամքին հատկացվող գումարները, որպեսզի իր խոսքով՝ «նորմալ ուտելիքի կարոտ չմնան»:

«Պանիրը թանկացել է, կարագը, հացը: Պատկերացնում եք՝ հասարակ հաց ու պանիր ուտելու համար առնվազն 1000 դրամ է պետք: Բայց առաջ հաց ու պանիրը աղքատի ուտելիք էր համարվում,- բորբոքված ասում է **տիկին Լիդան:** - Հիմա ժողովուրդն ուտում է ձու, մակարոն, ոսպ: Հիմա թարմ բանջարեղենը, միրգը, միսը ճոխություն են համարվում, ամեն մարդ չի կարող իրեն թույլ տալ»:

«Մեր երկրում շատ դժվար է գտնել մի ապրանք, որը չի թանկացել, և խոսքը միայն այս տարվա կամ այս ամսվա մասին չէ, հիշեք գները 5 տարի առաջ և նայեք հիմա: Մի՞թե մեր աշխատավարձերը նույնքան բարձրացել են, որքան գները: Իհարկե ոչ»,- ասում է մասնագիտությամբ **մանկավարժ Ժաննան**:

Զրուցեց Արման Ղարիբյանը

Ի դեպ

2011 թ. փետրվարին Երևանում նվազագույն պարենային զամբյուղը կազմում էր 37.166 դրամ, իսկ նվազագույն սպառողական զամբյուղը՝ 57.607 դրամ: Այսինքն՝ Երևանում 4 անձից կազմված ընտանիքի համար նվազագույն սպառողական զամբյուղի արժեքն է 230.428 դրամ:

Նվազագույն սպառողական զամբյուղը 2011 թ. փետրվարին 2010 թ. փետրվարի համեմատությամբ աճել է 16.735 դրամով կամ 4 անձից կազմված ընտանիքի համար՝ 66.940 դրամով:

«Հիմնական սննդամթերքի գների մոնիթորինգի վերլուծություն», «Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ

Կլիմայի փոփոխություն

Կարկուտը ծեծած տեղն է ծեծում...

Տարին գյուղատնտեսության համար բավական լավ էր սկսվել: Կառավարությունը հայտարարեց, որ գյուղատնտեսությունն առաջնահերթ ոլորտ է լինելու: Գյուղացիները վարկ էին վերցրել, շատերը նույնիսկ ծրագրել, թե ստացած եկամուտն ինչ են անելու: Իսկ հունիսի սկզբին Հայաստանի գրեթե ողջ տարածքում տեղացած ուժեղ կարկուտը՝ քամու հետ միասին, հերթական անգամ լուրջ վնասեցին ծիրանի, դեղձի, սալորի, խնձորի, խաղողի այգիներն ու գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածքները:

Հատկապես տուժեցին Արմավիրի, Վայոց ձորի, Կոտայքի և Լոռու մարզերի համայնքները: Վնասները դեռևս հաշվարկվում են, սակայն արդեն պարզ է, որ սպասվելիք պտղի և մշակաբույսերի բերքին խոշոր վնաս է հասցվել, և հետևանքները կանդրադառնան հանրապետության ողջ բնակչության վրա՝ կանգնեցնելով բոլորին նոր թանկացումների առջև և զրկելով բազմաթիվ գյուղացիների նույնիսկ օրվա հացից:

«Կարկուտը միանգամից եկավ, թափեց մեր գլխին, չէինք էլ կարողանում դուրս գալ մեքենաներից, լրիվ բուսականությունը վերացրեց 15 րոպեի մեջ: Կարտոլ, լոբի, կաղամբ, կանաչի՝ սրանք այն բանջարեղեններն են, որոնք լրիվ ջարդեց»,- թվարկում է Ստեփանավանի բնակիչ Ժորա Մագթաղյանը:

«Վարունգ էի ցանել, սաղ տվեց հողին հավասարացրեց»,- ասում է 60-ամյա Ռիմա տատն ու արտասվելով ցույց տալիս կարկուտի պատճառած ավերածությունները:

«Սաղս գնացել ենք, բանկերից վարկ վերցրել, որ հողը ցանենք, բերք ստանանք, յոլա գնանք, բայց էսօր կարկուտը սաղ տվեց-ջարդեց: Հմի էլ դե արի վարկերի տակ ճռռա: Ի՜նչ անի խեղճ գյուղացին, գլուխը ո՛ր պատով տա»,- նշում էին կարկտահարությունից տուժած համայնքների բնակիչները:

«Վարկ էինք վերցրել, մի կերպ հասցնում էինք, բայց էս տարի էլ սենց եղավ, անցած տարի՝ նույնը, դրա անցած տարի էլ բերք կար, առնող չկար: Գյուղացու օրը օր չի՞»,- հուսահատվում է Արագածոտնի Դաշտ գյուղի բնակիչ Արթուրը, որը շուրջ 30 տարի ծիրանի այգի է մշակում:

«Ես հասկանում եմ գյուղացուն, մի կողմից կրծողները, մյուս կողմից՝ կարկուտը: Չեմ կարծում, թե գյուղատնտեսության նախարարությունը կարողանա փոխհատուցել պատճառված ամբողջ վնասը»,- ասում է «Հայաստանի ագրարագյուղացիական միավորում» ՀԿ նախագահ Հրաչ Բերբերյանը:

Հայտնի է, որ մեր գյուղատնտեսության համար ամենաաղետաբերը կարկուտն է: Մասնագետների գնահատմամբ՝ Հայաստանի գյուղատնտեսությանը կարկուտի հասցրած տարեկան վնասը կազմում է շուրջ 30 մլն դոլար: 2009-ին կարկուտը 1,9 մլրդ դրամի վնաս էր հասցրել, իսկ 2010-ի վնասը կազմեց 4,2 մլրդ դրամ:

Կառավարությունը կարողացել է պետական բյուջեի հաշվին 118 հակակարկտային կայան տեղադրել հանրապետությունում, սակայն գյուղատնտեսական ողջ տարածքը պաշտպանելու համար դրանց թիվը պետք է առնվազն կրկնապատկվի: Բացի այդ, կայանները միշտ չէ, որ արդյունավետ են գործում: Այնպես որ, գյուղացուն իրոք մնում է միայն աղոթել, որ բնակլիմայական նոր աղետներ չլինեն...

Հայացք դրսից

«Հասմիկը, Արթուրը, Անժելան աշխատասեր և նվիրված մարդիկ են, որոնք կարող են լավ ապրուստ վաստակել իրենց ընտանիքների համար, եթե, իհարկե, իրենց ուժերից վեր գտնվող հանգամանքները հօգուտ նրանց դասավորվեն: Սակայն Հայաստանում կոռուպցիան և վերավաճառողները, որոնք խոչընդոտում են գյուղացիների համար շուկայի հասանելիությունը, ինչպես նաև համաշխարհային շուկայում աճող գները, սոցիալական նպաստների անհամարժեք համակարգը և եղանակի չար կատակները՝ ամենը գյուղացիների դեմ են»,- այս եզրակացության է հանգել բրիտանացի լրագրող Ալեքս ՌԵՆԹՈՆԸ Հայաստանի հեռավոր գյուղերի մասին իր պատմություններում:

Անժելա. «Կլիման շատ է փոխվել, եղանակները խառնվել են իրար»

«Մեր նորածին «բալիկը» ցրտահարվում է: Սարսափելի է»,- ասում է Անժելա Բաբայանը: Նա և սկեսուրը ծիրանենու ճյուղերն են թափ տալիս՝ փորձելով նուրբ ծաղիկներից թոթափել ձյան շերտը:

Արթուրը՝ Անժելայի ամուսինը, գլուխն է տարուբերում. ձախորդություն ձախորդության հետևից... մինչև ե՞րբ... Անցյալ տարվա ապրիլի կեսին սառնամանիքների պատճառով (ճիշտ այս տարվա պես) կորցրին խնձորի բերքը, իսկ ամռանը եղանակը սրբեց-տարավ գյուղի կարտոֆիլի բերքը:

«Կլիման շատ է փոխվել: Եղանակները խառնվել են իրար: Սովորաբար տարվա այս ժամանակ արդեն պոմիդորն էր հասնում: Իսկ հիմա ցրտերն ավելի երկար են տևում, աշնանն էլ անձրևներն են շատ: Դրա պատճառով դժվար է անասնակեր մթերել, դաշտերն էլ անհնար է հնձել»:

Արթուրի, Անժելայի և նրանց զավակների համար, որոնք ապրում են աղքատության շեմին՝ մի երկրում, որի տնտեսությունը խիստ տուժել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով, անբարենպաստ եղանակային պայմանները լուրջ խնդիրներ են ծնում: «Դեռ մի փոքր խնձորի հույս կա, բայց պատկերացրեք՝ ի՞նչ կլինի, եթե դա էլ չփրկվի: Անցած տարի ո՛չ խնձորից, ո՛չ էլ դեղձից օգուտ չստացանք: Ուրեմն էս տարի կկարողանանք ուտել միայն մեր աճեցրածը. գումար չի լինի երեխաների հագուստի, ածուռի, բենզինի, բոլոր այլ անհրաժեշտ բաների համար»:

«Երեք երեխա ունենք՝ 11, 16 ու 18 տարեկան: Մեծը համալսարանում է՝ մաթեմատիկա է սովորում: Մեր աշխատած ամբողջ հավելյալ գումարը գնում է նրա ուսման և ապրուստի վարձը վճարելուն: Չգիտեմ՝ մյուսներին կկարողանա՞նք համալսարան ուղարկել, թե՞ ոչ»: Որոշ հույսեր է արթնացնում ՕՔՍՖԱՄ-ի ծրագիրը, որը կօգնի եղեգիս գյուղի բնակիչներին կոոպերատիվ հիմնելու և ավելի շահավետ կերպով իրացնելու իրենց արտադրած միրգն ու բանջարեղենը:

Ակնհայտ է, որ այս հողը կարող է լավ ապրուստ տրամադրել: Բայց Հայաստանի գյուղական շրջանների բնակիչները շարունակում են տուժել բնության տհաճ անակնկալներից՝ այն աստիճանի, որ վերջերս գյուղատնտեսության նախարարը նրանց ասաց, որ իր միակ խորհուրդն է՝ գնալ դաշտ և աղոթել: Հարցն այստեղ ոչ միայն եղանակի չար խաղն է, այլ նաև գնածը...

Հասմիկ. «Երազում եմ մի օր զարթնել՝ առանց անհանգստանալու, թե երեխեքս էսօր ի՞նչ են ուտելու»

Եղեգիսի դաշտավայրում են գտնվում մեծ վանքեր և ամրոցներ՝ Հայաստանի հարուստ պատմության վկաները, սակայն այժմ այնտեղ միայն ավերակներ են և սարսափելի աղքատություն: Առանց հողի կամ այն մշակելու գիտելիքների դժվար է հասկանալ, թե ինչպե՞ս կարելի է օգնել մարդկանց:

Հասմիկ Ժոզեֆյանը երբեք չի կարողացել հող մշակել. նա և նրա ամուսինը, ինչպես Վայոց ձորի մարզի բնակիչներից շատերը, այստեղ են եկել որպես փախստականներ:

Ժոզեֆյանների փլվող երկսենյականոց տունը, որը գտնվում է դաշտավայրից վեր խոյացող բլրի լանջին, հող չունի, չունի նաև խմելու կամ ոռոգման ջուր, և ընտանիքը չգիտի, թե ինչպես կարելի է մշակել այս բլուրները: Մինչև հիվանդանալը Վիգեն Ժոզեֆյանն աշխատում էր Աբովյան քաղաքի կոշիկի գործարանում:

Իսկ հիմա 29-ամյա Հասմիկը իրեն, հաշմանդամ ամուսնուն և հինգ փոքր երեխաներին պահում է ամսական 40.000 դրամ նպաստով: Գումարը չի հերիքում հատկապես սննդամթերքի՝ գրեթե Արևմտյան Եվրոպայի գներին հասնող գնածի պայմաններում:

«Գումարը հերիքում է միայն մի քիչ ալյուր առնելու և էլեկտրաէներգիայի վարձը վճարելու համար: Ես երբեք երեխեքի համար շոր կամ կոշիկ չեմ առել: Ես փող չունեմ նրանց հիվանդանոց կամ բժշկի տանելու համար: Հարևաններին եմ խնդրում ինձ դեղեր տալ»:

«Երեխեքիցս մեկը երկու ամսականում մահացավ: Մենք նրա համար գերեզման սարքելու փող չունեինք: Ես նույնիսկ չհասկացա, թե նա ինչի՛ց մեռավ: Ականջը ցավում էր. քնեց, իսկ առավոտյան արդեն մեռած էր»:

Բոլոր հայերի նման հնարամիտ և մեծահոգի Հասմիկը դիմում է հին հնարքների՝ փորձելով լրացնել եկամտի բացերը: Մենք Հասմիկ Ժոզեֆյանի հետ բարձրացանք բլուրը՝ սնունդ հայթայթելու: Բարձր բլրի վրա՝ ձյան շերտի անմիջապես տակ, տեսանք հին վանքի ավերակները:

Հասմիկը ծնկի իջավ գետնի վրա և փորեց-հանեց նեխուրի փոքրիկ ճյուղերի նմանվող ճերմակ շիվեր: Դա մանդակ է: Հում վիճակում կիտրոնի և սամիթի համ ունի: Հայաստանում դա համեղ կանաչի է, ասում են՝ շատ լավ է սրտի համար: Հասմիկը և մյուս կարիքավոր գյուղացիները դա վերավաճառողներին են հանձնում կիլոգրամը 300 դրամով: Իսկ ի՞նչ են առաջնահերթ գնում այդ գումարով:

Լուսանկարը՝ Էբի Թրայլեր Սմիթի

«Կարտոֆիլ, ալյուր, դասագրքեր և դեղորայք»,- ասում է նա:

Հայ գյուղացուն հատուկ առատաձեռնությամբ Հասմիկը մանդակ եփեց մեզ համար: Խաշած մանդակն այնքան համեղ չթվաց, որքան հումը: Ես մի վերամբարձ ճառ ասացի այն մասին, որ հում բանջարեղենի սննդանյութերն ավելի օգտակար են նրանց համար և որ դրանք եփելիս կորչում են: Հասմիկը քաղաքավարիորեն ուղղեց ինձ. «Գիտեմ, մենք եփած ջուրն էլ ենք խմում»:

Երբ Հասմիկը եփում էր, միացավ էլեկտրականությունը, ինչի մատակարարումը սարերում միշտ անկանոն է: Ճռճռալով կենդանացավ հին հեռուստացույցը, և միացավ ռուսական հեռուստահաղորդում խոհանոցի մասին. կյանքի հեգնանքն ինձ ստիպեց հառաչել: Բայց Հասմիկն ասաց. «Ես սիրում եմ այս հաղորդումները: Իհարկե, դրանցից քաղցի զգացում ես ունենում, բայց ես երազում եմ, որ մի օր կունենամ այդ մթերքները: Ժոզեֆան (ավագը՝ 9 տարեկան) հեռուստացույցով պիցցա տեսավ և ուզեց: Շատ կուզենայի նրա համար մի օր պիցցա սարքել»...

Գոյատևման եզրին

Հայաստանի նվազագույն սպառողական զամբյուղը 2011 թ. մարտի դրությամբ կազմում է ամսական 62.600 դրամ (մոտ 170 դոլար):

Պարենային զամբյուղը ամսական կտրվածքով 35.4000 դրամ է (մոտ 96 դոլար):

Այն իր մեջ ներառում է սննդի հետևյալ օրական չափաբաժինները՝ 250 գրամ հաց, 100 գրամ միս, 200 գրամ կաթ, 25 գրամ պանիր, 250 գրամ կարտոֆիլ, 200 գրամ միրգ, 5 գրամ շաքարավազ, կես հատ ձու և այլ մթերքներ:

Աղքատ են համարվում այն ընտանիքները, որոնցում մեկ անձի հաշվով միջին ամսական սպառումը ցածր է աղքատության ընդհանուր շեմից՝ 30.920 դրամ:

Այն ընտանիքները, որոնց միջին ամսական ծախսերը մեկ չափահաս անձի հաշվով ցածր են պարենային շեմից, որը կազմում է 17.483 դրամ, համարվում են ծայրահեղ աղքատ:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

- Հայաստանում նվազագույն աշխատավարձը՝ 32.500 դրամ, կազմում է 1 անձի սպառողական նվազագույն զամբյուղի արժեքի 56,4%-ը:
- Հայաստանում միջին թոշակը՝ 28.396 դրամ, կազմում է նվազագույն սպառողական զամբյուղի 49,3%-ը:
- Միջին անվանական աշխատավարձը 2011-ի հունվարին կազմել է 104.051 դրամ: Հետևաբար, 4 անձից կազմված ընտանիքի (որտեղ կա 2 աշխատող՝ ՀՀ միջին աշխատավարձով) ամսական եկամուտը՝ 208.102 դրամ՝ վերահաշվարկված 1 անձի համար, կկազմի 52.026 դրամ կամ նվազագույն սպառողական զամբյուղի 90,3%-ը:
- Հայաստանում «միջին վիճակագրական ընտանիքը» (որը կազմված է 4 անձից, որոնցից 2-ն աշխատում են և ստանում հայաստանյան միջին աշխատավարձ) աղքատ է:

Ըստ «Հիմնական սննդամթերքի գների մոնիթորինգի վերլուծության» եզրակացությունների 2010 մարտ - 2011 մարտ

Դիմանկար

Էմմա. «Շատ կուզեի սիրուն, կարմիր զգեստ ունենալ. կարմիրն իմ սիրած գույնն է»

Լուսանկարը՝ Էբի Թրայլեր Սմիթի

12-ամյա Էմման և նրա երկու եղբայրներն ապրում են Վայոց ձորի Արտավան գյուղում: Թեև ամռանն այստեղ ջերմաստիճանը բարձրանում է մինչև 40 աստիճան՝ կրկնակի ավելի, քան սովորաբար Անգլիայում, բայց երբ մենք ապրիլին այստեղ էինք, հողի վրա դեռ ձյուն կար:

Դա նաև տարվա ամենաքաղցած շրջանն է, երբ սննդամթերքի գինն ամենաբարձրն է, և դեռ մի քանի ամիս կա մինչև ամառ մրգի և բանջարեղենի հասնելը:

Երբ հարցրինք, թե ընտանիքը հաճա՞խ է միրգ ուտում, Էմման և մայրը ծիծաղեցին. նրանք նոր տարուց այս կողմ մրգի երես չեն տեսել: Ընտանիքի աճեցրած խնձորը նոր տարուն սպառվում է, իսկ էկզոտիկ մրգերը՝ նարինջ, բանան, պարզապես շատ քանկ են: Էմմայի մայրը պատմում է, որ ցորենի ալյուրը, որով նրանց լավաշ են թխում, գնալով թանկանում է: Երեք տարի առաջվա համեմատ հիմա արդեն կրկնակի թանկացել է: «Իմ հիմնական հոգսն է՝ էնպես անել, որ երեխեքս սոված չմնան»,- ասում է նա: Էմման սիրում է ծմեռը. «Մենք սահնակ ենք քշում, ձնագնդի խաղում»,- ասում է նա: Բայց ձմռանը նաև շատ ցուրտ է, ու նա անհամբեր սպասում է ամռան շոգին:

Ցրտի պատճառով ընտանիքն ապրում է քանդվող տան երկու սենյակում: «Ես ծնողներիս ու եղբայրներիս հետ այստեղ եմ քնում, մեր սենյակը վարագույրով բաժանված է այն տեղից, որտեղ ուտում ենք, և որտեղ եղբայրներս են քնում: Սենյակում վառարան է վառվում: Պատին իմ դասացուցակն է և իմ ու իմ երեք լավագույն ընկերների լուսանկարը: Իսկ այս թիթեռները ես եմ սարքել կոնֆետի թղթից»:

«Երբ մեծանամ, ուզում եմ մեծ ընկերության քարտուղարուհի լինել և համակարգիչով աշխատել,- ասում է Էմման: - Ես քաղաքում կապրեմ, բայց կվերադառնամ այստեղ, որովհետև մեր գյուղը շատ եմ սիրում: Ես էստեղ 100 մետրի վրա գայլ եմ տեսել և արջ: Բայց չվախեցա, այսինքն՝ շատ քիչ վախեցա»: Տանն օգնում է մորը, քանի որ հայրը ստիպված Ռուսաստան է գնացել աշխատանք փնտրելու. գյուղի չափահաս բնակիչներից տասից վեցը գործազուրկ են: «Ես օգնում եմ տունը մաքրել ու հորթերին եմ խնամում՝ խոտ եմ տալիս, գոմը մաքրում»:

Ի դեպ, ՕՔՍՖԱՄ-ը գյուղի բնակիչներին կենդանիներ է հատկացնում և վերապատրաստում կազմակերպում՝ փորձելով օգնել մարդկանց ավելի շատ օգուտ քաղել հողից և ավելի քիչ կախված լինել նպաստներից ու դրսից բերվող մթերքից:

Տանն էլեկտրականություն հաճախ չի լինում, և Էմման ու եղբայրները հեռուստացույց քիչ են նայում:

«Ես դպրոցը շատ եմ սիրում, բայց այնտեղ սոված եմ: 12-ն անց կեսին արդեն բոլորը սոված են: Իմ սիրած ուտելիքը խոզի միսն է, բայց վերջին անգամ կերել եմ նոր տարուն, երբ խոզը մորթեցինք: Ես սիրում եմ խոզի միսն ուտել կարտոլի պյուրեով, կարագով և աղով: Մենք հավ չենք ուտում, որովհետև դրանք ձու են ածում»:

Էմմայի մայրն ասում է, որ իր ստացած ամսական 30.000 դրամ նպաստի համարյա կեսը ծախսում է ալյուրի վրա: Հաճախ փող չի լինում դասագրքերի կամ գրենական պիտույքների համար: Բացի այդ, եղանակի քմահաճ փոփոխությունները գյուղի բնակիչների համար է՛լ ավելի են դժվարացնում բանջարեղենի բերք ստանալը:

Մենք Էմմային հարցրինք, թե որո՞նք են նրա հիմնական մտահոգությունները: «Ես պապայիս շատ եմ կարոտում: Երանի՜ շուտ հետ գար: Վերջին անգամ որ քաղաքից եկավ, ինձ բաներ բերեց: Բաներ առաջին անգամ էի ուտում, ինձ շատ դուր եկավ: Ես մի քիչ անհանգստանում եմ ապագայի մասին: Չեմ ուզում, որ բնությունը և երկրագունդը վտանգվեն: Բոլորը խոսում են աշխարհի վերջի մասին: Ասում են՝ կարող է նույնիսկ 2012 թվին լինել»:

Իսկ ի՞նչ հույսեր ունի այս աղջնակը: «Ես կուզենայի արագ տնային աշխատանքներս անել, որ օգնեմ մամային: Ու շատ կուզեի սիրուն, կարմիր զգեստ ունենալ. կարմիրն իմ սիրած գույնն է»:

Հատուկ թողարկումը պատրաստվել է ՕՔՍՖԱՄ ՄԲ Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ promediagender_arm@yahoo.com